ՄԵԾԻ ՏԱՆՆ.ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Վերջին մեկ տարում երկու կարևոր իրադարձություններ նոր թափ հաղորդեցին մեր ժողովրդի ազգային գիտակցության զարթոնքին, որի լավագույն արտահայտություններից մեկն էլ հայ ժողովրդի միասնականության ձգտող ոգին է: Ղարաբաղյան արդար պահանջը և դեկտեմբերյան սարսափելի աղետը միավորեցին մեր ժողովրդի հոգեկան ուժերը: Այդ գործընթացից դուրս չէր կարող մնալ Հայ Եկեղեցին: Եթե մեր ժողովրդին հուզող առաջին քաղաքական տագնապի առիթով ափյուռքը արտահայտեց իր բարոյական զորակցությունը, ապա երկրաշարժի հետևանքների վերացման համար պատրաստակամություն հայտնեց անել ամեն հնարավոր բան՝ բուժելու համար Հայրենիքի խորը վերքերը: Այս գործունեության ծիրի մեջ է, որ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը 1988 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին մխիթարական այցելություն տվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ կիսելու համար վիշտը Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառ կաթողիկոսի, որն 1988-ին ապրեց իր կյանքի ամենատագնապախոով տարին:

Եվ ահա 1989 թվականի ապրիլին Գարեգին Բ-ը երկրորդ անգամ ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, բայց այս անգամ որպես Մեծի Տանն Կիլիկիո առաջին կաթողիկոսը, որ Ս. Էջմիածին էր գալիս պաշտոնական հրավերով Ամենայն Հայոց կաթողիկոսի:

Մայր Աթոռի շրջափակը լեցուն էր բազմությամբ, իսկ Մայր տաճարում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը շրջապատված միաբաններով և խուռներամ բազմությամբ՝ սպասում էր բարձրաստիճան հյուրին:

Մեքենաների շարասյունը կանգ առավ Տրդատի դռան մոտ: Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոսը իջավ մեքենայից ուրախ տրամադրությամբ, ողջունեց ժողովրդին և «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Մայր տաճար: Իջման սուրբ սեղանի առաջ կայացավ պատմական ողջագուրումը երկու Հայրապետների: Ժողովուրդը հաղորդվեց այդ եղբայրական ողջագուրումին և պայծառացավ լավատեսությամբ ու լիացավ հույսով:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը դիմելով Գարեգին Բ կաթողիկոսին ասաց.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Փառք Աստուծո Հարցն մերոց, որ վերստին շնորհում է ինձ այս պատեհությունը Ձերդ Սրբության ժամանումը վերստին ողջունելու այս սուրբ տաճարում, որտեղ մոտ 1700 տարիներից ի վեր մենք պահպանում ենք սուրբ հիշատակը Փրկչի՝ մեր Հիսուս Քրիստոսի իջման ի Հայաստան աշխարհ: Այս իջման տեղում կանգնած, մենք զգում ենք, թե ավելի հոգևոր հաղորդակցության մեջ ենք գտնվում մեր քրիստոնեական ոգեկանության ակունքների հետ: Իսկապես, մոտենալով այդ ակունքներին, մեզանից ամեն մեկը ինքն իրեն ավելի լավ է ճանաչում իբրև հայ քրիստոնյա և մանավանդ իբրև Հայ Եկեղեցվո ծառայող: Եվ ոչ միայն մեզանից ամեն մեկը ինքն իրեն է լավ ճանաչում և հասկանում, այլ նաև մեկս մյուսին ավելի լավ ենք ճանաչում և ավելի լավ հասկանում: Այդ պահը ես հոգեկան մխիթարությամբ ապրում եմ այստեղ և վստահ եմ, որ դուք նույն զգացումներով տոգորված եք, դուք և ձեր շքախումբի անդամները, որոնք ուղեկցեցին ձեզ դեպի Հայաստան: Եվ ինչքան լավ ճանաչենք մենք զմեզ, մոտենալով մեր ոգեկանության ակունքներին, կարծում եմ ավելի հոգեպես կզորանանք, կպայծառակերպվենք, կդառնանք մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ իդեալ, մեկ առաքելություն: Ահա այս մտորումներով, Ձերդ Սրբություն, բարի ժամանում կմաղթեմ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Ձեզ և Ձեզ ընկերացող մեր սրբազան եղբայրներին և աշխարհական ձեր վարչական մարմինների ներկայացուցիչներին, մաղթանքով, որ միասին հոգեպես մխիթարվենք: Չեմ ուզում ասել միասին ուրախանանք, որովհետև տակավին մեր երկիրը և մեր ժողովուրդը վիրավոր վիճակի մեջ է, Դուք լավ գիտեք այդ, Ձեր աչքերով տեսաք նախորդ Ձեր այցելության առիթով: Ճիշտ է, մթնոլորտը մի քիչ հանդարտված է, բայց ժողովուրդը շարունակում է մնալ ծանրորեն վիրավոր: Եվ տակավին երևի երկար պիտի տևի այս կացությունը, մինչև վերանան հետևանքները այն ահավոր երկրաշարժին, որ բաժինը եղավ մեր ազգին անցյալ դեկտեմբերի 7-ին:

Բարի գալուստ, սիրելի Վեհափառ եղբայր Մեր: Ձեզ մաղթում եմ քաջառողջություն, մշտանորոգ կորով, որպեսզի Ձեզ հատուկ ոգեշնչումով շարունակեք Ձեր առաքելությունը այնտեղ՝ Կիլիկյան Աթոռի գահի վրա և ամեն տեղ, ուր Ձեր ոգեբաշխ խոսքը պիտի հասնի և պետք է հասնի: Այս պահուն, չգիտեմ, մի համարձակ զգացում ունեմ. զգում եմ, որ ինչ-որ չափով ես Տանն Կիլիկիո կաթողիկոս եմ, Դուք էլ ինչ-որ չափով Ամենայն Հայոց կաթողիկոս:

Բարի եկաք, հարազատ եղբայրներ Մեր»:

Ճանապարհից պարտասյալ, բայց ոգեպինդ Գարեգին Բ կաթողիկոսը պատասխանեց Ամենայն Հայոց կաթողիկոսի բարիգալստյան խոսքին ասելով.

«Սիրելի Վեհափառ եղբայր, հոգևին այնպիսի զգացումներու մթնոլորտին մեջ կգտնվիմ այս պահուն, զոր բառերով նկարագրելը անկարելի պիտի

ըլլա ինձի համար: Ուրախության և մխիթարության բարդ զգացումներ են հոգիս մեջ այժմ, ալիքի պես բարձրացող զգացումներ: Նախ, Վեհափառ Տեր, երջանիկ եմ Աստուծով, որ ինձի սիրքը շնորհեց անգամ մը ևս այս սրբազնասուրբ վայրին մեջ գտնվելու, և ինչպես Դուք այնքան խոր իմաստով ըսիք, այստեղ մեր ամբողջ անցյալն է, որ մեր էության հետ կմիախառնվի: Եվ ես ինքզինքս չեմ զգար 57 տարեկան, այլ երկու հազար տարեկան, մեր ազգին քրիստոնեական տարիքովը կշափվիմ, երբ կզտնվիմ պատմությամբ խոսուն պերճաբարբառ և սրբազնասուրբ այս վայրի մեջ: Եվ կլիցքավորվիմ հոգեպես ու ազգայնորեն, երբ հողը, մեր հայրերու շինած այս տաճարը, քարերը, աղոթքները, մոմին թողած հետքերը հոգիս մեջ կմիանան: Ես արտասանմանեն կուգամ: Ամեն օր չէ, որ կտեսնեմ Հայաստան, ինչպես որ դուք կտեսնեք, ամեն օր չէ, որ ինչպես մեր սիրեցյալ եղբայրը՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը այս տաճարը կտեսնե: Մեզի քիչ անգամ կտրվի այս առիքը: Ամեն անգամ, որ տրվի, բազմապատիկ արժեքով մեր կյանքի մեջ անիկա ղեր կկատարե:

Վեհափառ Տեր, շորս ամիսներ առաջ էր, երբ այստեղ գտնվեցանք միասին և արցունքով ողջագուրվեցանք իրարու հետ: Երկու ամիսներ առաջ, օտար ափերու վրա, դարձյալ միասին գտնվեցանք Նյու Յորքի մեջ: Եվ, մեր ժողովուրդին առջև միասնորեն կեցած, կոչ ուղղեցինք մեր ժողովուրդին, որ ցավեն, վերքեն, տագնապեն, ավերակեն, երկրաշարժեն չազդվի մեր ժողովուրդը և ընդհակառակը, իր կամքը վերապրե, իր տեսիլքը պայծառացնե, իր ապագայի ընելիքը հշտե և կյանքին նայի, և ոչ թե մահվան: Եվ ի՜նչ մեծ մխիթարություն եղավ ամբողջ ամերիկահայության համար և նաև ամբողջ աշխարհի հայության համար, որոնք լսեցին մեր երկրի արտահայտությունները, այդ միասնական կեցվածքը, որուն մեջեն արտահայտվեցավ անհակտելի միությունը և ամբողջականությունը մեր եկեղեցիին և մեր ազգին:

Վեհափառ, այսօր կուգամ ձեր հրավերովը եղբայրական և իմ խոստումովս, որ Լենինականի աղետի պատճառով չէ, որ մենք միասին պետք է ըլլանք, այլ մենք միասին պետք է ըլլանք, որովհետև միասին ըլլալու համար ծնած ենք, որովհետև միասին ըլլալու համար ձեռնադրված ենք, միասին ըլլալու համար մեր հայատին վրա սուրբ մյուռոնը ստացած ենք և այս է մեր կոչումը: Եվ այսօր կուգամ մեր Հայաստանի վերականգնումի կամքով պրկված:

Եղբայրներ, քույրեր, որ շուրջս հավաքված եք, հոգևորական, աշխարհական, ժողովուրդ հայոց:

Ես այն սպասելիքով եկա, որ միասնաբար, եղբայրորեն իմ ավագ եղբորս՝ Վազգեն Ա կաթողիկոսին հետ շարունակենք մեր ուխտյալ միասնությունը, համագործակցությունը մեկ ժողովրդի և մեկ հավատքի: Աշխարհը հիացավ: Եկեք այդ հիացումը բարձր պահենք, ամրացնենք գործակցության մեջեն այդ միության սքանչելի երևույթը, որ մեր ժողովուրդի զորության աղբյուրն է: Վեհափառ Տեր, ինձի ընկերացող սրբազան հայրերու՝ Տաքև, Մեսրոպ սրբազան հայրերու և վաղը Հալեպեն ժամանող մեր Սուրեն սրբազանի, մեր գավազանակիր վարդապետի, մեր կեդրոնական վարչության անդամներուն անունով խորին շնորհակալություն կհայտնեմ Ձեզի, որ այս պահը ընծայեցիք մեզ այս Սուրբ Տաճարին մեջ, և զգացի ավելի քարմորեն, որ Ձեր տունը իմ տունն է, իմ տունը Ձեր տունն է, ինչպես Դուք հիշտ ըսիք: Թող այդպես մնա հավիտյանս հավիտենից»:

Հետո ժողովրդի ոգևորիչ ծափողջույնների ներքո երկու հայրապետները առաջնորդվեցին Վեհարան:

Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսի շքախմբի մաս էին կազմում Տ. Տսրեն արք. Սարգիսյանը, Տ. Մեսրոպ արք. Աշճյանը, Տ. Սուրեն արք. Քաթսրոյանը և գավազանակիր Տ. Բաբկեն աբղ. Զարյանը, ինչպես նաև Կիլիկիո կաթողիկոսության Ազգային կենտրոնական վարչության անդամներ պրն. պրն. Երվանդ Փամպուքյանն ու Ոսկեբերան Արզումանյանը:

ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼԻ 23

1989 թվականի ապրիլի 23-ին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարը լեցուն-լեցուն էր հավատացյալներով: Բոլորը սպասում էին սրբազան պատարագին: Պատարագիչն էր Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը: 1441 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոսության Ս. Էջմիածին տեղափոխվելուց հետո Տանն Կիլիկիո առաջին կաթողիկոսն էր, որ պատարագ էր մատուցում Մայր տաճարում:

Առավոտյան ժամը 11-ին եկեղեցական թափորը Վեհարանից պատարագիչ Հայրապետին առաջնորդեց Մայր տաճար: Գարեգին Բ կաթողիկոսը հընթացս օրհնություն բաշխելով բարձրացավ սուրբ Խորան: Մայր տաճարի քառաձայն երգչախումբը պրն. Խորեն Մեյխանեջյանի ղեկավարությամբ ինքնամոռաց երգում էր Եկմալյան պատարագը: Պատարագիչ Հայրապետը խաղաղություն էր բաշխում ամենեցուն:

Ահա և քարոզի պահը: Նորին Սրբություն Գարեգին Բ կաթողիկոսը դիմեց հավատացյալ ժողովրդին և ասաց.

ՎԵՐԱԾՆՆԴՅԱՆ ՏԵՍԻԼՔՈՎ

Սիրեցյալ և հավատարիմ հայորդիք, զավակունք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո և որդիք Հայկազյան ցեղի:

Այսօրվա իմ հոգևոր խոսքին անցնելե առաջ, սրտիս խորագույն ակունքներեն պարտ կզգամ վառք և գոհություն վերառաքելու դեպի Աստված, որ այս երջանկագույն պահերեն մեկը տվավ ինձի իմ կյանքիս՝ պատարագիչ դառնալու Ս. Էջմիածնի Մայր խորանին վրա, հրավերովը Մեր թանկագին եղբոր՝ Ամենայն Հայոց Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին, որ հատուկ հրավերով կարելի դարձուց իմ ներկայությունն այստեղ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Պատգամավորության մը հետ միասին, որպես շքախումբ ինձի ընկերակցող՝ Սրբազան Հայրեր և Ազգային Կեդրոնական Վարչության անդամներ, որպեսզի մենք ալ մեր ամբողջական և անվերապահ մասնակցությունը շարունակենք առավել չափով բերել դեկտեմբերի 7-ին մեր Հայաստան աշխարհին պատահած ահավոր երկրաշարժեն վերականգնելու, ավերյալ քաղաքներն ու գյուղերը վերակառուցելու համահայկական և նվիրական ու սրբազան գործին: Եվ նաև այսօր աղոթակից դառնալու Նորին Սրբությանը մեր նվիրականագույն օրերեն մեկուն, որ հայ ժողովուրդին կյանքին մեջ որոշադրիչ դեր սկսած է կատարել՝ Ապրիլ 24-ին: Խորապես շնորհակալ եմ, Վեհափառ Եղբայր, որ Ձեր հրավերով ինձի տվիք և մեր Կաթողիկոսությանը ընծայեցիք սքանչելի այս պատեհությունը՝ առավել ևս ամրացնելու և գործնապես արտահայտելու մեր ժողովրդի անսասանելի միասնությունը, անխորտակելի միությունը: Թող

Աստված երկինքեն, Իր շնորհաց աղբյուրեն առողջություն հեղու Ձեր կյանքին մեջ և պարգևե բազմաբեղուն գործունեություն՝ հառավել պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ամբողջ Հայաստանյայց Եկեղեցիին ու հայ ժողովուրդին: Թող օրհնե Աստված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը, Հոգևոր Խորհուրդը և բոլոր այն հասարակությունները, որոնք Ս. Էջմիածնի միջոցավ սպասարկության մեջ են մեր ժողովուրդին բարիքին: Թող Աստված օրհնե հայրենի մեր պետությունը, Հայաստան աշխարհը, իր բոլոր կազմակերպություններով, իր բոլոր հաստատություններով և ժողովուրդի խավերով, որպեսզի առավել ևս ծաղկի, պտղաբերի մեր Հայաստան աշխարհը դարերու ընթերքներէն ստեղծագործական գիտակցությամբ նոր շունչ և նոր սնունդ բաշխելով համայն հայության:

*
* *

Այս պահուն մենք բոլորս կապրինք նախատօնակը, կ՚առնենք տեսակ մը նախահաշակը բազմիցս խորհրդաստ այն ոգեկոչումին, մեր բոլորին ամբողջ տարվան կյանքին մեջ եզական, անհավասարելի այն դրվագին, որով վաղը ողջ հայությունը հայրենի աշխարհին մեջ և երկրագնդի այն բոլոր անկյունների մեջ, ուր հայության շունչ կա, պիտի ունենա իր ժամադրությունը, ուխտի նվիրականությամբ կնքված ժամադրությունը այն մեկուկես և ավելի միլիոն հայ մեր եղբայրներուն և քույրերուն հետ, որոնք չկան այսօր իրև մարմնեղեն գոյություն: Բայց կան, որովհետև մե՛նք կանք, որովհետև մեր Հայաստան աշխարհը կա, ու ոչ միայն կա, այլ կանի, կզորանա, կպայծառանա և իր ապագայի հաղթանակի համբուն վրա կհառաջանա: Վաղը նահատակներու ժամն է, որ պիտի հնչէ ամեն հայու կյանքին մեջ. վաղը անշոշափելի ձեռքերով պիտի քսշվին բոլոր այն պարանները, որոնք աննյութեղեն զանգակներու ձայնը պիտի հնչեցնեն Տեր-Զարեն. վաղը բոլոր հայ զանգակները մեկ ձայն ունին՝ *աքսոր, ջարդ, ցեղասպանություն,* և անոնց դիմաց նոր բառեր՝ *վերականգնում, վերածաղկում, հարություն։* Անհավասիկ բառեր, որոնք վաղը ուրիշ իմաստ պիտի զգենուն, քան ուրիշ առիթներով իրենց արտասանված պահերուն: Այստեղ, Ս. Էջմիածնի մեջ, ուր Աստուծո լույսը կաթեցավ դարեր առաջ, այստեղ իմ մատուցած առաջին պատարագին ես կհայցեմ Աստուծմե, որ այդ լույսեն կաթիլ մը հեղու իմ և ձեր հոգիներուն մեջ, որպեսզի ավելի հստակ տեսնենք մեր հանպարհը:

Կյանքիս մեջ երեք պատարագներ ունեցած եմ, որոնք տարբեր եղած են ուրիշ հարյուրավոր պատարագներեն, զոր մատուցանելու երջանկությունը ունեցած եմ: Անդրանիկ պատարագս, հազիվ հոգևորական ձեռնադրված, 20 տարեկանիս, Անթիլիասի Մայր տաճարի խորանին վրա: Երկրորդ՝ ծննդավայր հայրենի գյուղիս խղճուկ եկեղեցիին մեջ, ուր առաջին անգամ *«խոնարհեցո-ապրեցո»* բառերը արտասանեցին շրթունքներս: Երրորդ՝ երբ Կաթողիկոսական օծման պահուն հայոց ս. մյուռոնը գագաթիս վրա վերջին անգամ թափվեցավ Անթիլիասի Մայր տաճարին մեջ: Ու, Վեհափառ Տեր, այսօրվան պատարագն է այն, որ կուգա պսակել այդ բոլորը, որովհետև այստեղ էր, ուր ծագեցավ լույսը ի Հայաստան աշխարհի. «էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա, ձայնի հնչեցին... եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ», որովհետև այստեղ ծագեցավ մեր հոգիներուն մեջ լույսը՝ կյանքը ըմբռնելու, կյանքը արժևորելու, քրիստոնեական հավատքով գաղափարված և լիցքավորված, ուղղություն ստացած կյանքը:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
(22.4.1989 թ.)

ԱՄԱՂՈՒԻ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԱՌԱՋ—26.4.1989 Թ.

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԱՄԱՂՈՒԻ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ
ՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ



ՀԱՅՐԵՆԻ ԱՄՐԱԿՈՒՌ ԺԱՑՌԵՐՆ ԱՊԱՎԵՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐ—26.4.1989 Թ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ—26.4.1989 թ.

ՍԻՍԻԱՆ—26.4.1989 թ.



ՍԻՍԻԱՆ, ՇԱՔԻԻ ՋՐՎԵԺ

26 ապրիլ 1989 թ.

Վաղը, բոլոր այս ժողովուրդը, հաղամամայր Երևանի մեջ, պիտի հետիոտն բարձրանա կարծեմ թե դեպի Ե՛ԼԻՄ՝ հայ հավատքի իրրև կերոն բարձրացված Սիծեռնակաբերդի հուշարձանին և այնտեղ իր սիրտը պիտի վերանորոգե: Կ'ուզեմ սիրելի հավատացյալներ, պահ մը կարվիճ ձեր սովորական ապրումներեն, կ'ուզեմ որ երևակայություն դառնամ և երևակայության թևերով, պարագրեմ, համապարփակեմ ամբողջ հայությունն ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի: Վալը, երևակայեցեմ Անթիլիասի Մայր տաճարին մեջ և մանավանդ Ապրիլյան նահատակներու մասունքները՝ ոսկորները ամփոփող հուշարձան-մատուռին առջև, առանց խտրության գաղափարի, դավանանքի, բոլոր մարդիկ պիտի ծունկի գան հիշատակին առջև նահատակության ոգիով իրենց կյանքը անմահացուցած մեր մեկուկես միլիոն զոհերուն: Բարձրացեմ Պիկֆայա, լեռան գագաթին, ուր հայ վերածնընդյան հուշարձանն է կանգնած, ոչ թե հուշարձան մահվան, հուշակոթող ջարդին, այլ հուշանվեր մեր հայ ժողովրդի վերագարթոնքին, որ քարձրացվեցավ այդ ժայռին վրա հիսունամյակին առիթով: Ու հիմա տարածեցեմ ձեր աչքերը մինչև աշխարհի ծայր նկատվող Ավստրալիա, մինչև ուրիշ ծայր նկատվող Կանադա ու Ամերիկա և Հարավային Ամերիկա, գացեմ Եվրոպա, անցեմ Միջին Արևելք ու գացեմ մինչև Հնդկաստան ու ամեն տեղ, ուր հայ կա, ամբողջ հայությունը աշխարհ մը դարձած ու աշխարհին առջև իր ինքնությունը, իր արժանապատվությունը, իր չմեռնելու կամքը հռչակելու կոչված օրը պիտի ապրի, և իր հոգին պիտի ջրդեղվի. քայլ մը դեպի վեր պիտի հառաջանա այդ ժողովուրդը:

Ամեն տարի ես այս ժամադրությունը, անցնող տասներկու տարիներու ընթացքին, կ'ապրեի Անթիլիասի մեջ: Առաջին անդամն է, կյանքիս մեջ, որ այս ժամադրությունը այնտեղ չեմ ապրիր, այլ կապրիմ հայրենի սուրբ հողին վրա, նահատակներուն ապրած հողին այն բաժնին վրա, որ սոսկ հող չմնաց, այլ մարդու վերածվեցավ, երբ իրենց ապրած հողը հողէն անդին արժեք չունի այսօր: Քիչ առաջվա իմ գծած համայնապատկերին մեջ աշխարհի մեջ միայն մեկ տեղ կա, ուր հայությունը ժամադրությունը պիտի չկրնա հարգել իր նահատակներուն հետ. Արարատեն անդին եղող այդ հողն է, իրենց ապրած հողն է, Վանն ու Էրզրումն է, Մուշն ու Տարոնն է, և Պոլիսն է, ուր հայը պիտի գրկվի, իր կամքին հակառակ, իր ժամադրությունը հարգելու իր նահատակներուն հետ: Կուգա օրը, հավատացեմ—ինչպես եկան ուրիշ օրեր, որոնք անհերևակայելի էին ժամանակին—կուգա օրը, երբ նաև ամբողջ հայ ժողովուրդը իր ժամադրությունը կհարգե իր սրտին այն մյուս մասին մեջ, որ ձեր աչքերուն առջևն է ամեն անգամ, երբ Արարատին կնայիմ ու Արարատեն անդին կերևակայեմ աշխարհն հայոց:

*
* *

Սիրելիներ, այստեղ, Ս. Էջմիածնի մեջ, այսօր ես կուզեմ ոգեկոչել այն պահը, 1915 թվի դեկտեմբերի վերջերը, երբ այս վանքը դեռ Վեհափառ Հոր շինարար ձեռքով այսպես պայծառացած չէր, այս վանքին պատերուն տակ 15 000 որբ, անվաղ, ախտոռական, իրենց կյանքը քաշկռտող վինակին մեջ մարդիկ հավաքվեցան Վանեն, Իգդիրեն և ուրիշ տեղերեն, երբ այս վանքին մեջ ամեն օր 8000 ժողովուրդին կերակուր կտրվեր, ուր այս Սուրբ Աթոռին միաբանները՝ Մատթեոս, Եփրեմ, Մեսրոպ եպիսկոպոսները, Գարեգին Հովսեփյանց, Բարկեն և Վրթանես վարդապետներ ու Խորեն Մուրադբեկյան

իրենց ժողովուրդին ցավը կմեղմեին, աղոթք կընեին, վերք կլվային, որքին որքությունը մոռցնել կուտային...: Բարեբախտաբար Հայաստանի այս կողմը ջարդերուն անմիջական բաբին տակ չընկավ, և այդ ջարդերուն հետևանքները դարմանելու մեջ մեծ դեր կատարեց, որուն համար ես հարգանք կմատուցեմ այդ ժողովուրդին, և այդ ժողովուրդի ծոցեն բխած հարազատագույն այս Սուրբ էջմիածնին: 1916 թ. Անատոլ Ֆրանսն ասաց. *«Հայաստանը հոգեվարքի մեջ է, բայց նա պիտի վերածնի, որովհետև,,*— ավելացնում է,— *այն փոքր արյունը, որ նրա երակների մեջ է մնացել, թանկագին արյուն է, և այդ արյունից պիտի ծնվեն հերոսական ժառանգորդներ»,* և եկան, եկան: Ու այսօր, անավասիկ, երբ կդիտեմ հայ աշխարհը Հայաստանի մեջ ու Հայաստանեն դուրս՝ Սփյուռքին մեջ, ո՞ւր էինք, ո՞ւր հասանք. Մահվան ձորն էինք, կյանքի բարձունքներուն հասանք: Երբ այսօր Երևան քաղաքը կտեսնենք, հայ ժողովուրդի վերհառնությունը կդիտենք, Սփյուռքի մեջ, ուր հայությունը տժգունելու ամեն պատճառ ուներ, օտար ազդեցություններու հովը այնքան զորավոր կփչեր, դուք վկա եք, արտասահմանեն հիմա այնքա՞ն հայեր կուգան, հայությունը ինքզինքը վերագտնելու, վերարժևորելու և վերստին ստեղծագործ դարձնելու կյանքի փիլիսոփայության մեջ է մտած:

Սիրելիներ, եղբայրներ և քույրեր,

Այսօր մեր այս վերազարթոնքը այնպիսի երևույթ է, որուն տարողությունը մենք հաճախ չենք գնահատեր: Պետք է այսօր դուք անդրադառնաք, որ հայ ըլլալը պատիվ է բոլոր անոնց համար, որոնք հայությունը կնսանշնան: Ավետիք Իսահակյանը տեղ մը գրեր է. *«Հայ ծնվելը դժբախտություն է, հայ ապրելը հաղթանակ է»:* Ես այսօր, իր հոգին թող ներե ինձի, պիտի փոխեմ բառերը քիչ մը և պիտի ըսեմ. *«Հայ ծնվելը պատիվ է, հայ ապրելը տառապանք է, բայց հայ մնալը հաղթանակ է»:* Եվ այդպես եղավ մեր կյանքը անցնող հիսնամյակին: Երբ Եղեռնի հիսնամյակը նշեցինք 1965 թվականին, դուք պետք է տեսնեիք Բեյրութի մեջ համազանգված ապրող ամբողջ հայությունը, ավելի քան 80.000 հայեր այդ գաղութի մեջ միասիրտ, միակամ, միադեմք և միանակամ նայեցան աշխարհին, և ուխտեցին մնալ միացած հայության գերագույն շահերուն, հայ ժողովուրդի անքոնաբարելի իրավունքներուն, արդար դատին համար, որուն դիմաց ամբողջս մեկ ենք, այլապես ազգ չենք: Կա՛մ մեկ ենք և կա՛մ ազգի կտորտանք ենք: Հիմա եկած ենք այդ գիտակցությանը, որ մենք ազգ ենք, և ոչ թե ազգի մը կտորներ, նետված այստեղ ու այնտեղ: Եկավ 60-ամյակը, եկավ 70-ամյակը և հաջորդ տարին պիտի գա 75-ամյակը: Կարծեք թե ուղեղիս մեջ դեռ կհնչեն 50-ամյակին Երևանի օպերայի դռներուն առջև հազարավոր հայ երիտասարդներուն կանչը՝ *«Մեր հողե՞ր, մեր հողե՞ր»:* Եվ այդ բառերը նոր շունչ բերին Հայաստանի մեջ ու արձագանք գտան արտասահմանի բոլոր անկյունները: Մեր հողե՞ր, որովհետև անոնք մեր հոգին են, մեր հողերը նյութ չեն, մեր հայրերու հոգիով թրծված ժառանգություն են: Ով կհրաժարվի իր հայրերու իրավունքեն, դավանան է իր հայրերուն, դավանան է պատմության և անհավատարիմ է Աստծուն: Հետո, դեռ անցնող տարին, ձայն մը հնչեց Ղարաբաղեն, ինչպես ուրիշ ատեն ուրիշ ձայն մը հնչեր էր Էրզրումեն: Այդ ձայնը հայ ինքնության, հայ արժանապատվության, հայ լինելության աշխարհի համար բարիք դառնալու կամքին պոռթկումն է, որ այստեղ Երևանի մեջ այնպես շքեղորեն արձագանքեց և նաև արտասահմանի և՛ հայկական, և՛ միջազգային բոլոր շրջանակներուն մեջ: Եվ այսօր ալ անավասիկ հազար փառք Աստուծո, որ մեր ժողովուրդը այդ կոչը կենդանի կպահե: Կողջունեմ այն մաս-

նավոր կարգադրությունը, որ տեղի ունեցավ Ղարաբաղի մեր ժողովուրդին համար, որով Ղարաբաղի մեր ժողովուրդի հարազատ ինքնարտահայտությունն ամրան բացվեցավ: Եվ այստեղ, այս սուրբ խորանին վրա, ես իմ գնահատանքը կհայտնեմ, որ մենք լավ նանազարհի մեջ ենք և շնորհակալություն նաև անոնց, ովքեր այդ նանաղարհը կարելի դարձուցին մեր ժողովուրդին համար: Բայց Սիրելիներ, մի՛ մոռնամ, որ մենք ունինք դատ մը, մեր հայ ժողովուրդի ամբողջական այժմ մեր պատմական երկիրը բաժանող հայրենիքի դատը. պետք չէ մոռնալ ատիկա և մեր ձայնը պետք է միշտ բարձր պահել, որպեսզի մենք կարենանք հասնիլ այն օրվան, զոր ունենալու համար, զոր շկորսնցնելու համար մեր նահատակները իրենց կյանքը տվին:

Ես իմ խոսքը կուզեի եզրակացնել հետևյալ մի քանի մտածումներով: Անցյալը հիշել բավարար չէ, մենք պետք է գիտնանք նայիլ նաև և մանավանդ ապագային. և այստեղ է, որ ես կոչ կուղղեմ հատուկ կերպով մեր երիտասարդ սերունդին. հայրենիքը շինել չի նշանակեր քարի վրա քար դնել միայն, վերաշինելը նյութեղեն գործ չէ միայն, այլ հոգեկան, բարոյական, իմացական:

Մենք կապրինք այնպիսի դարու մը մեջ, ուր մեկուսացումը անկարելի է, մենք պիտի օտար ազգերու հետ շփում ունենանք անպայման, և՛ ունինք. միջազգային հաղորդակցության միջոցները չեն թույլատրեր կղզիացում, բայց մենք պետք է ընտրել գիտնանք, օտար ազդեցություններուն դեմ մաղ պետք է գործածենք, ընտիրը ներս բերենք և անպետքը դուրս թափենք: Եվ այն ատեն մենք առաջքը առած կըլլանք հոգեկան մահվան, այսինքն ինքնասպանության: Ցեղասպանությունը չհաջողեցավ, բայց ինքնասպանությունը կրնա հաջողիլ, եթե թույլ գտնվեց, զգույշ և արթուն չմնաց և մեր հայկական հարազատ ձայներուն մեջ ապրեցուցած ոգին, քարեն տաճար շինած, կաշիեն մագաղաթ սարքած, մագաղաթին վրա գիր գրած, ու ձայներեն երաժշտություն հանած ոգին թուլցնինք: Մեր կրած ազդեցությունները ազգայնացնենք և ազգայինին մեջ մարդկայնացնենք ու զայնորեն տարածենք: Ինչպես պատահեց 5-րդ դարում. մեր թարգմանիչները գնացին Բյուզանդիոն, գնացին Աղեքսանդրիա, Անտիոք, Մծբին, Եդեսիա, բայց վերադարձան, Աստվածաշունչ թարգմանեցին, հայացուցին, հայ գրականություն ստեղծեցին և միջազգային արժեքները իրենց հայրենի հողին մեջ ցանելով նոր ընձյուղներու և նոր ստեղծագործություններու նանապարհ բացին: Մենք պետք ունինք սերունդի և՝ ղեկավա՛ր սերունդի, առաջնորդող, միտք ունեցող, լուսապայծառ հայացք ունեցող նոր սերունդի: Հայկական դատը, նվիրականացույն դատը մեր ժողովուրդի լինելությունն է, լինելության մեջ ուժեղացումն է, որովհետև ազգերը, աշխարհը արժեք կուտա միայն անոր, որ արժեք ունի և իր արժեքը պարտադրել գիտե: Այս է կյանքի իմ հասկցած փիլիսոփայությունը:

*
* *

Վեհափառ Տեր, խոսքս փակելեն առաջ, ես սրտի պարտք կզգամ այսօր Ձեզի հատկապես ուղղելու իմ եղբայրական անկեղծ ապրումս. Դուք պատմության մեջ ինչպես պիտի բնորոշվիք, պատմաբանները թող այդ մասին մտածեն, բայց ես հավատացած եմ, և անվասիկ շորս-հինգ անգամ Ձեզի հետ ըլլալեն ետքը և երկու անգամ Ս. Էջմիածնի մեջ Ձեզի հետ ապրելե ետքը, աչքովս բոլոր տեսածներեն ետքը, ես այս սուրբ խորանին վրա սրտի պարտք

կզգամ Ձեզ կոչելու *Հայոց Վերածնունդի Կաթողիկոս։* Ինչ է, Լենինականի երկրաշարժը եկավ-ավերեց, բայց Դուք չընկնվեցաք և առաջին օրեն ըսի. *«Ձեզի հետ ենք, Վեհափառ»։* Եկանք առաջին անգամ դեկտեմբեր 15-ին, արցունք ունեինք մեր աչքերուն մեջ, աղոթք ունեինք մեր սրտերուն մեջ, աղոթքները միացուցինք, արցունքները միախառնեցինք։ Եկած եմ հիմա ամբողջ մեր Կաթողիկոսության ձեռքերը լծելու այն արօրին, որ այս Հայաստանի հողեն կյանք պիտի հանե, ու ավերակեն նոր շենք պիտի շինե, ավելի գեղեցիկը պիտի շինե։ Անհավասիկ, թե ինչու եկած եմ և ինչու այս պատարագը կմատուցեմ, խոնարհելու համար հիշատակին մեր նահատակներուն, նահատակության ոգին ապրելու համար, ոչ մեռնելով, այլ գործելով։ Գրիգոր Լուսավորիչը, չմոռնանք, մահով չսրբուցավ, սուրով չնահատակվեցավ, ատոր համար զինք կկոչենք *Կենդանի նահատակ։* Կյանքը նահատակության գաղափարով ապրիլը սրբության համփան է։ Վեհափառ, Դուք ամբողջ այս տարիներու ընթացքին ապրեցաք Ձեր կյանքը զոհողության գերագույն գիտակցությամբ և այսօր ցնծացեք և ուրախացեք և գիտցեք, որ գոնե ես, և կհավատամ ինձի պես ուրիշները, Ձեզ պիտի ողջունեն միշտ ի կյանս և ի հանդերձելումն, որպես Վերածնունդի Կաթողիկոս Ամենայն Հայոց, Աստուծո փառքին, մեր ժողովրդի բարիքին և մեր ժողովրդի ու ազգության պատվին, հավիտյանս հավիտենից, ամեն։

Հավարտ սուրբ պատարագի Վեհարանում տեղի ունեցավ բարիգալլուստյան պաշտոնական ճաշկերույթ։

ԱՊՐԻԼԻ 24

Գարնանային այս օրը ամեն հայի համար վաղուց արդեն նվիրական է դարձել։ Օր հիշատակի, որ «գարուն ա, ձյուն ա արել»։ Օսմանյան Թուրքիայի իրագործած այդ հրեշավոր եղեռնը Արևմտյան Հայաստանում ոչ միայն մոռացության չտրվեց, այլ դարձավ խարան մարդկության ճակատին։ Իսկ խարանը սրբել անհնար է, այն կարելի է միայն ամոքել արդարությամբ, հայ ժողովրդի պատմական արդար իրավունքների վերահաստատումով։ Իսկ փաստը՝ աշխարհով մեկ տարտղնված հայությունն է, որը բարեբախտաբար սերունդ առ սերունդ ուղղեց մեջքը և զոհի, ողբացողի վիճակից վերաճեց պահանջատերի. «Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց» ասաց վսեղամեռիկ Պարույր Սևակը։ Հետզհետե բյուրեղացավ հիշատակը, դարձավ խունկ ու պատարագ և նաև կոթող-հուշարձան, բայց հուշարձան ոչ միայն մահվան, այլև հարության, վերածնվող հույսերի և պահանջատերի վճռականության։ Իսկ այդ հուշարձաններից ամենաազդեցիկն ու խորհրդավորը, պերճախոսն ու գեղագիտորեն հրաշալին Երևանի Ծիծեռնակաբերդի բլուրի վրա կանգնեցված հուշարձանն է՝ հավերժական կրակին հակված Հայաստանի նահանգներով և երկնասլաց, երկնքի կապույտի մեջ մխրճվող ընդվզումի սլաքներով։

Ու ամեն տարի հարյուր հազարավոր երևանցիներ և Հայաստանի այլ շրջաններից եկած տղամարդ ու կին, ծեր ու երեխա, հատուկ այս առիթով ժամանած սփյուռքահայեր և մեր թանգարան-երկրի արտասահմանցի հյուրեր հանդարտ քայլքով, հոգեպարար երաժշտության մեղմ հնչյունների տակ գնում են իրենց հարգանքի տուրքը մատուցելու անմեղ զոհերի անմեռ հիշատակին։ Եվ ծաղիկները լեռնանում են անմար կրակի շուրջ. ծաղկե-

պսակների ծաղիկները գլխահակ շարվում են հիշողության բազալտե պատի տակ. պատը լերկ է, և յուրաքանչյուր անցորդ այդ մեծ էջը կարդում է իր հոգու ձայնով, իր հավատամքով և բռնկուն ընդվզումով:

Այս տարի այդ համապարփակ սուգին ավելացել էին նաև Սումգայիթի և անողոք դեկտեմբերյան երկրաշարժի զոհերի հիշատակները: Հայը ավելի՞ էր ընկճված, հուսաբեկ: Ոչ, մեր ժողովրդի համար հուսախաբությունը երբեք չի վերածվում անհուսության: Նա միշտ, դարերի ընթացքում, իր մեջ կուտակել, գտել է այդ լույսի կայծը և հույսը դարձել է լույս ու լավատեսություն: Այդ հույսի շիթը դարձել է ինքնահաստատում և ճակատագիրն ու պատմությունը տեղի են տվել նրա ապրելու համառ կամքի, ստեղծագործելու, վերհառնելու հզոր ճիգի առաջ: Վկա ներկա երկիր Հայաստանը՝ անցյալի մաքառումների դատակնիքն ու վարդահեղեղ արշալույսների առհավատչյան:

Այսօր հույսը ավելի պայծառ է. Խորհրդային Հայաստանի պետական իշխանությունը իր հարգանքի տուրքն է մատուցում կարմրամեխակ ծաղկեպսակի հետ ձեռքին ունենալով Հայկական Խորհրդային Հանրապետության Օրենքը 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին: Դատապարտող է ու պահանջատեր ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

Այսօր հույսը ավելի պայծառ է. իր հարգանքի տուրքն է մատուցում ամբողջական Հայ Եկեղեցին. խաչակիր ծաղկեպսակներ են զետեղում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն ու Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը՝ Հայրենիք—Սփյուռք միասնական ու միատարր շքախմբով: Ապա երկու հայրապետները իջնում են դեպի անմար կրակ, ուր սկսում է հոգեհանգիստը: Ժողովուրդը քար լռությամբ ունկնդրում է խաղաղաբեր աղոթքը: Հոգեհանգստից հետո ավելի քան երբևէ հուզված Ամենայն Հայոց Հայրապետը տալիս է իր հայրապետական պատգամը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Սիրելի ժողովուրդ, եղբայրներ և քույրեր, քաղաքացիներ Մայր Հայրենիքի: Ինչպես ամեն տարի, մեր պետական իշխանության հարգանքի պահից հետո, ժամը 11-ին, գալիս ենք մենք Ս. Էջմիածնից հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, գալիս ենք խոնարհվելու մեր մոտ երկու միլիոն նահատակների սուրբ հիշատակի առաջ և վերանորոգելու մեր ուխտը՝ հաստատուն մնալու, անշարժ մնալու նրանց կտակի վեմին վրա: Մեր նահատակները զոհվեցին տակավին Վարդանանց պատերազմից սկսյալ՝ վասն հավատո և վասն հայրենյաց: Նրանք նահատակվեցին հայ ժողովրդի ապագա վերածնունդի երազանքով, հայրենի պետության, Հայաստանի վերականգնումի տեսիլքով: Ազատագրական ճանապարհի վրա զոհվեցին նրանք: 1915-ի ցեղասպանությունից հետո սակայն, հազիվ երեք տարի անց, այդ նահատակված, պարտված, հյուծված, ժողովրդի զավակները կարողացան ձեռք բերել 1918-ի Մայիսյան Սարդարապատի հաղթանակը, որով մեր հուսո դռները բացվեցին և վերածնվեց հայոց հայրենիքը՝ Մայր Հայաստանը, որ մինչև այսօր գոյատևում է, զարգանում, աճում է և բարգավաճում: Այն ժամանակ հայոց թիվը այդ հողամասի վրա հազիվ կես միլիոն էր, այն էլ բոլորը հայեր չէին: Այսօր երեք ու կես միլիոն ենք և ծաղկումի ու վերելքի ճանապարհի վրա գտնվող երկիր և պետություն:

Թեև անցյալ դեկտեմբերին, մի ծանր հարված ևս կրեցինք, ահավոր

երկրաշարժի հետևանքով, բայց մեր նահատակների հիշատակի առաջ մենք վերստին վկայում ենք, որ պարտված ժողովուրդ չենք, հուսահատված ժողովուրդ չենք, ընդհակառակը, վերստին զգում ենք մենք մեզ զորավոր, միասնական հայ ժողովուրդ, միասնական մեր հայրենի պետության հետ, որպեսզի գա այն օրը, երբ համայն ազգը հայոց ձեռք-ձեռքի տված պարբոնի Արարատի շուրջ բոլորը:

Սիրելի հավատացյալներ, ինչպես տեսնում եք, այս անգամ ես առանձին չեմ, այլ իմ կողքին է իմ հոգևոր եղբայրը՝ Գարեգին Բ Կաթողիկոս Տանն Կիլիկիո: Նա գալիս է Լիբանանից, որտեղ իր Աթոռն է հաստատված: Մի եկեղեցական հզոր կենտրոն, որ ազգապահպանման, հոգևոր և ազգային մշակույթի զարգացման մեծ դեր է կատարում այս վերջին 60 տարիների ընթացքում Սփյուռքի տարածքի վրա: Բայց նա գալիս է Լիբանանից, թեև նրա տիտղոսն է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս: Հարց պետք է տալ՝ ինչո՞ւ չի գալիս Կիլիկիայից, ինչո՞ւ չի գալիս նա Կիլիկյան պատմական Հայաստանից: Նա չի գալիս Կիլիկիայից, որովհետև 1915-ի ցեղասպանության օրերին զոհվեց նաև Կիլիկյան ողջ հայ ժողովուրդը, քարուքանդ արվեցին մեր վանքերը, եկեղեցիները, հոգևորականներ զոհվեցին հարյուր-հարյուրներ, ավերակի վերածվեց մայրաքաղաք Սիսը, որտեղ գտնվում էր աթոռանիստ կենտրոնը Կիլիկյան Հայոց Կաթողիկոսության: Կարծում եմ, համաձայն եք ինձ հետ, որ նրա ներկայությունը այստեղ հույժ խորհրդանշական է: Նա ինձ հետ միասին խորհրդանշում է ամբողջական Հայաստանյայց Եկեղեցին, մեկ անբաժան ազգ դարձած, խորհրդանշում է նաև կարևոր չափով մեր ամբողջ ժողովրդի միասնությունը՝ Հայրենիք և Սփյուռք, խորհրդանշում է նաև մեր միացյալ ուխտը՝ հավատարիմ մնալու մեր նահատակների հիշատակին և ապրելու երազանքով նրանց իղձերի, արդար իղձերի իրականացման: Ահա, սիրելի ժողովուրդ, խորհուրդը, իմաստը, մեր երկուսի ներկայության այստեղ Ծիծեռնակաբերդի այս բարձունքում:

Եղեռնի զոհերի հիշատակի առաջ գլուխ խոնարհելուց հետո զույգ հայրապետները իրենց շքախմբով վերադարձան Մայր Աթոռ: Մայր Տաճարում մատուցվում էր հոգեհանգստյան սրբազան պատարագ: Պատարագիչն էր Սյունյաց թեմի նորընտիր առաջնորդ Ասողիկ եպս. Արիստակեսյանը:

Սրբազան հայրը օրվա խորհուրդը ժողովրդին հաղորդելով իր քարոզում ասաց.

«Այսօրվա սրբազան պատարագը ունի համաքրիստոնեական և համամարդկային մեծ նշանակություն, որովհետև այս պատարագով հայցում ենք երկնային Տիրոջ միջնորդությունը մեր երկու միլիոն նահատակների հոգու հանգստյան համար: Համայն հայության կենտրոնը հանդիսացող, սրբություն սրբոց, համայն հայ ժողովրդի աղոթքների ոգեկիր և հպարտություն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այսօր իր աչքերը հառեց քաղաքամայր Երևանի բարձունքին, Ծիծեռնակաբերդին և ձայնակցեց. «Հանգիստ և խունկ մեր նահատակներին»: Սիրեցյալ ժողովուրդ հայոց, այսօր ապրիլի 24-ն է 1989 թվականի: Պատմության գիրքը շարունակում է կազմավորվել, սակայն մենք այստեղ կանգնում ենք մի պահ ոչ թե շարունակելու պատմությունը, այլ հետ դարձնելու պատմության էջերը: Ամեն ժողովուրդ ունի իր կյանքի գիրքը և ամեն ժողովուրդ այդ գրքում արձանագրում է իր վարքը: Ամոթ չէ՞ այսօր հանուր մարդկության պատմության մեջ մեր ձեռքը

վերցնենք Օսմանյան կայսրության պատմության գիրքը և մեր աչքերը սևեռենք այն էջի վրա, որ թվագրված է 1915 թվական, Ապրիլի 24: Այդ էջը արյունոտ է ամբողջությամբ, վկայությունները խեղաթյուրված են: Այդ նույն արյունոտ գիրքն է՝ սկսյալ 15-րդ դարից, 1453 թվականից՝ Բյուզանդիոնի անկումից և Օսմանյան կայսրության ստեղծումից մինչև 20-րդ դարի լուսաբացը, մինչև նոր հանրապետության Իթթիհադի գորշ գայլերը. մի գիրք, որ հանուր մարդկության ամոթանքն է և, ինչու չէ, նաև աստվածային արարչագործության սրբապղծությունը: Տխուր ենք այսօր ամենքս: Աստվածաշնչում աշխարհն ստեղծելիս ասում էր Աստված՝ բարի է օրը, և եղավ գիշեր, և եղավ ցերեկ և եղավ օրն առաջին: Օրը-օրին, ամիսը ամսույն, տարին-տարուն, սակայն սև սուգ պատեց հայոց աշխարհին: Վերադառնանք, կարդանք մեր կենաց գիրքը, պատմության տխուր, անփառունակ, սակայն երբեմն հրաշալի, հերոսական և հրաշքի համազոր էջեր: Էջեր, որ կարող են յուրաքանչյուր ժողովրդի պատիվ բերել: Հայ ժողովուրդը իր ողջ պատմության ընթացքում հավատարիմ մնաց մեկ սկզբնական գաղափարի՝ սիրել բարին, պաշտել բարին և վնաս չտալ ուրիշներին: Իսկ մեր հարևան ցեղերը խաչաձևելով իրենց բոլոր արշավանքները այս սրտաչափ ու սիրոչափ հայրենիքի վրա, ելնելով իրենց քաղաքական նկրտումներից, ծվատեցին ու թողեցին այս փոքրիկ Խորհրդային Հայաստանը: Մահը և թշնամիները սիրահարվեցին հայ ժողովրդին, իսկ հայ ժողովուրդը սիրեց կյանքը և պաշտեց հարությունը: Ահա հայ ժողովրդի պատմության կենսափիլիսոփայությունը և նրա գոյապաշտպանության հիմնաքարը: Այն հիմնաքարը, որի վրա բարձրացան մեր լեռնաքարերի վրա վեր խոյացող տաճարներն ու սրբարանները: Հայաստան աշխարհ, այսօր դու նույնն ես, ինչ որ երեկ, նույն քրիստոնյան ես, նույն լավապաշտն ու բարետեսը: Սակայն այսօր այլ է քո գոյության ապահովությունն ու ոգեկան թոիչքը: 1915 թվականի եղեռնից հետո, 1918 թվականի Սարդարապատի հաղթանակից հետո վերածնվեց մի Հայաստան և համազոր դարձավ հավերժահարս հույսի: Այդ հույսով գոտեպնդեց հայ ժողովուրդին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա, երբ Ծիծեռնակաբերդից Դեր-Զոր տանող կամուրջի վրա 1986 թ. հետևյալ խոսքերը ասաց. «Եթե այսօր դուք ուխտի գնաք Դեր-Զորի անապատները և այնտեղ փնտրեք ձեր մեռելներին, նույն այն հրեշտակը, որ ավետեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը, կավետի նույն ձայնով՝ իզուր եք փնտրում ձեր մեռելներին անապատների մեջ, նրանք այնտեղ չեն, այլ հարություն առան և ապրելու են հավերժորեն»: Այդ հույսով չէ՞ր, որ հայոց մնացորդացը Մշո Ս. Կարապետից մինչև Էջմիածին, Դեր-Զորի անապատներից մինչև քաղաքամայր Երևան վերընձյուղվեցին, վերածաղկեցին և հաստատեցին, մենք ժառանգներն ենք մահը հաղթելու այն խորհուրդին, որ չհասկացան մեր բազմադեմ և բազմազան թշնամիները: Ինչպե՞ս կարող էին նրանք հասկանալ, երբ չէին թափանցել հրաշալի հարության վեհ գաղափարներին: Այդ նույն հույսով էր, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ն, ուղևորվելով Դեր-Զորի անապատներ, 1985 թ. կանգնեցրեց, սրբագործեց այն քարը, որի վրա վեր պիտի խոյանա այն մատուռը, ոչ թե ի հիշատակ մեռելների, այլ ի վկայություն նահատակների հարության: Հարգանք մեր նահատակներին և փառք վերածնված Հայաստանին, այսօրվա մեր ժողովրդին»:

Ապա պատարագիչ սրբազանը և զույգ հայրապետները թափորով առաջնորդվեցին դեպի Մայր Աթոռի շրջափակում բարձրացված Եղեռնի զոհերի

հուշարձան: Տեղի ունեցավ հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն: Ընտիրների հիշատակը անմար պահելու, մեր ազգային երազանքների իրագործման ճանապարհին միասնական գործունեության և մեկ ժողովուրդ՝ մեկ Եկեղեցի տեսլականով ապագան կերտելու պատգամ տվեց Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը:

ԱՊՐԻԼ 25

Գարեգին Բ Վեհափառը իր շքախմբի անդամներով այցելեց աղետյալ վայրերը: Նորին Սրբությունը դեռևս 1988 թ. դեկտեմբերին առիթ ունեցել էր սարսափելի երկրաշարժի հետևանքները տեսնելու, բայց այս անգամ գնում էր շոշափելու վերականգնման հույսը: Նրանք եղան Լենինականում, Սպիտակում, Ստեփանավանում և Կիրովականում: Ավերակները դեռևս ճնշող էին, սակայն, շինարարական հրապարակների վրա աշխուժություն կա, մի տեղ երկաթաշաղախ հիմքեր են թափվում, մի այլ տեղ պատեր են բարձրանում, սակայն կարևորն այն է, որ զգացվում է այդ քաղաքների և շրջակա գյուղերի հարության շունչը: Շրջապատի գարնանային գեղեցկությունը քիչ-քիչ ընկալվում է կարծես, վերապրելու կամքը կա, ուրեմն դրժվարությունները տեղի կտան անպայման:

ԱՊՐԻԼ 26 ԵՎ 27

Ամենայն Հայոց Հայրապետի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի համայցը դեպի Հայաստանի հարավային շրջաններ՝ Եղեգնաձոր, Սիսիան և Գորիս: Վերջին կաթողիկոսը, որ այցելել է Տաթևի վանք, եղել է Հայոց Խրիմյան Հայրիկը 1903 թվականին: Հետո համաշխարհային պատերազմ, եղեռն, գաղթականություն, հեղափոխություն, ստալինյան ծանր տարիներ ու հետզհետե հոգևարքի մեջ գտնվող Եկեղեցու վերհառնում: Եվ զույգ հայրապետները այցելեցին սուրբ Տաթև՝ նորոգելու իրենց ուխտը Աստուծո և ժողովրդի հանդեպ (այցելության նկարագրությունը տես առանձին, էջ 30):

ԱՊՐԻԼ 28

Գարեգին Բ կաթողիկոսը հոգու պարտք զգաց այցելելու Մատենադարան: Գիտնական բանասերի իր խառնվածքով Մատենադարանը հարազատ տուն է իրեն համար մանավանդ, որ այս անգամ ձեռնունայն չէր եկել, այլ իր հետ հայրենի ձեռագրատան համար նվեր էր բերել ԺԷ դարու մի գեղեցիկ ձեռագիր:

ԱՊՐԻԼ 29

Շաբաթ օրը վերապահված էր խորհրդակցություններն ու ծրագրերը ի մի բերելու: Երկու հայրապետները խորհրդակցեցին հետագա անելիքների մասին, համատեղ ձեռնարկումների ու Աթոռների փոխհարաբերությանց հետագա ամրապնդման մասին՝ հարթելու տարաձայնությունները՝ սեփա-

կան ժողովրդին և աշխարհին ներկայանալու համար իրրև մեկ սիրտ, մեկ հոգի և մեկ առաքելություն ունեցող Հայաստանյայց Առաքելական մեկ Եկեղեցի:

ԱՊՐԻԼ 30

Հետ սրբազան պատարագի Վեհարանում ողջերթի ճաշկերույթ էր: Ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, ազգային-հասարակական գործիչներ Մայր Հայրենիքից և Սփյուռքից:

Կենացներ առաջարկվեցին Մայր Հայրենիքի կենսունակության և զույգ հայրապետների արևշատության համար: Խոսք առան Ներսես ւարք. Պոզապալյանը, Ասողիկ եպս. Արիստակեսյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, Կիլիկիո կաթողիկոսության Ազգային կենտրոնական վարչության անդամ տիար Ոսկեբերան Արզումանյանը: Ապա խուք առավ Գարեգին Բ կաթողիկոսը: Բաժանման հուզումի տակ, բայց հետագա համատեղ գործունեության վճռականությամբ տոգորված՝ Նորին Սրբությունը հույս և լավատեսություն հայտնեց Հայրենիքի վաղվա նկատմամբ: Եվ որպեսզի Կիլիկիո Աթոռը դույզն չափով սատարի վերականգնման աշխատանքներին, Գարեգին Բ կաթողիկոսը հարյուր հազար դոլլար նվիրաբերեց Մայր Աթոռին հանուն Կիլիկիո կաթողիկոսության:

Ողջերթի խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Երբ միասին մեր շքախմբերով բարձրանում էինք դեպի Տաթև, ճանապարհին մի տեղ մեքենաները կանգ առան: Անշուք մի քար կար այնտեղ: Այն քարն էր, որ կանգնեցված էր ի նշան Խրիմյան Հայրիկի Տաթև այցելության 1908 թ.: Շոշափեցի քարը, հուզվեցի, ու այդ պահին ես մի դրվագ հիշեցի իմ կյանքից:

Նոր էի ձեռնադրված վարդապետ: Իմ անդրանիկ պատարագից հետո Պուքրեշի իմ նախկին սկաուտ ընկերները մի նվեր բերին ինձ՝ Խրիմյան Հայրիկի նկարը, տակը գրված էր՝ «Հայրիկը ձեզ առաջնորդ»: Այդ պահին ես հիշեցի այդ նկարը:

Խրիմյան Հայրիկը եղել էր այն իմաստուն և հեռատես, իսկապես Հայրիկ Կաթողիկոսը, որի օրոք, բավական երկար տևող անհասկացություններից և նույնիսկ թշնամական հարաբերություններից հետո, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կիլիկյան Աթոռի միջև հաշտություն էր գոյացել և եղբայրական գործակցություն: Հիմա մենք նույն բանը արեցինք: Չգիտեմ, թե մինչև հիմա ինչ չափով ես առաջնորդված եմ Խրիմյան Հայրիկի ոգիով, բայց Տաթևի ճանապարհի վրա ես այդ զգացի:

Երեսուն և ավելի տարիներ անցան 1957-ից, երբ մեր Աթոռների միջև հարաբերությունները բարվոք վիճակի մեջ չեղան: Հիմա կարելի է հարց տալ, թե ի՞նչն էր սխալը, ի՞նչն էր ճիշտը: Իմ կարծիքով, գոնե այսօր, այդ հարցը այլևս իմաստ չունի: Պարզապես մեր պատմությունը եղավ: Ֆրանսիացի պատմաբաններ մինչև հիմա, երկու հարյուր տարի հետո, վիճում են, թե ֆրանսիական հեղափոխությունը ճի՞շտ էր թե սխալ: Բայց իմաստուն

ֆրանսիացիք ասում են՝ ճիշտ թե սխալ՝ դա մեր պատմության անբաժան մասն է: Հիմա էլ կասկածողներ կարող են լինել, այստեղ թե արտասահմանում, և բնական է այդ, ես ոչ մեկին չեմ մեղադրում: Բայց մեր այս ուղիղ նոր ճանապարհից մենք երկուսս չպիտի շեղվենք: Ես վստահ եմ, որ այս բացված ճանապարհը հետզհետե պիտի դրսևորի իր դրական արդյունքները: Անշուշտ, կարծիքների փոխանակումներ պիտի ունենանք հետայսու, այլ նաև բանակցություններ, որոշ թեմական հարցեր լուծելու համար: Այդ բոլորից վեր, սակայն կմնա մեր եղբայրությունը՝ անքակտելի և անսասանելի: Եվ բոլորս զգում ենք, տեսնում ենք, թե մեր ժողովուրդը թե՛ Հայաստանի և թե՛ արտասահմանի մեջ հրճվում է այս իրավիճակով: Եթե հանկարծ նույնիսկ խորհինք ետ դառնալու մասին, ժողովուրդը մեզ չպիտի թողնի այլևս: Մենք պիտի ժողովրդի ոգին ուղիղ հասկանանք:

Եվ ավելին, մեր երկու Աթոռների այս մերձեցումը, համերաշխումը և գործակցությունը իմաստավորվում է ոչ միայն եկեղեցական կյանքի մակարդակի վրա, այլ նաև համազգային, քաղաքական կյանքի մակարդակի վրա: Ապացույց, երեք ազգային կուսակցությունների ծանոթ հայտարարությունը, որի հեղինակները մենք ենք կարևոր չափով: Ես՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Գարեգին Վեհափառ Կաթողիկոսը, թեև աշխարհագրականորեն իրարից հեռու, բայց իրար ուղիղ հասկացանք: Մնում է, որ Հայաստանցիք և արտասահմանի հայերը ամուր կանգնած մնան այդ հիմքի վրա, մեր կյանքի ներկա տագնապալի պայմաններում: Ցավոք, մեր երկրի երիտասարդության մի մասը ուղիղ չի հասկանում մեր երկրի քաղաքական կացությունը: Կա մի պատճառ, որ ես ուզում եմ ընդգծել՝ նրանց քաղաքական միամտությունը: Հուսահատեցուցիչ միամտությունն:

Ես միայն երկու օրինակ պիտի բերեմ: 1968-ին էր, ես Ամերիկայից նոր էի վերադարձել, մի խումբ ուսուցիչներ եկան ինձ մոտ, բոլորը համալսարանավարտ, երեսուն-հիսուն տարեկան մարդիկ էին, շուրջ քառասուն հոգի: Երկար խոսեցինք: Վերջում խոսքը հասավ Հայկական դատին, մեր հողերի հարցին: «Վեհափառ, արտասահմանի հայերը ի՞նչ են անում, ի՞նչ են մտածում» հարցնում էին: Ես մի քիչ նեղ դրության մեջ էի ընկնում: Չէի ուզում նրանց հուսախաբ անել, մյուս կողմից էլ չէի թույլ տալիս ինձ, որ շատ հուսադրեմ: Հանկարծ տնօրեններից մեկը վեր կացավ, թե՝ «Վեհափառ ջան, եթե դուք, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, վեր կենաք, ուժեղ մի գրությամբ ներկայանաք Միացյալ Ազգերի Կազմակերպության, Հայկական դատը չի՞ լուծվի»: Ես պատասխանեցի՝ «Սիրելիս, չի լուծվիր»: «Բա ո՞նց թե չի լուծվիր, հապա արդար չէ՞ մեր դատը»: Ահա մի օրինակ: Երկրորդ՝ երկրաշարժից առաջ էր, դարաբաղյան այդ փոթորկումի ժամանակ մի հեռագիր ստացա Երևանից: Հեղինակը լեզվաբան, համալսարանի դասախոս է: Հեռագրի մեջ մի տեսակ նկատողության ձևով դիմում էր ինձ Ղարաբաղի հարցով, թե դուք ձեր «հզոր ձայնով» եթե հանդես գաք, Ղարաբաղի հարցը կլուծեք: Ուրեմն, ստացվում է, որ որովհետև Կաթողիկոսը իր «հզոր ձայնը» չի ասում, Ղարաբաղի հարցը չի լուծվում: Նրան հրավիրեցի: Համակրելի մարդ էր, հիսուն տարեկանի մոտ, բարեկամացանք անշուշտ:

Գիտեք, այսքան միամտություն վտանգավոր է մի ժողովրդի համար: Մաղթելի է, որ մեր ժողովուրդը, այստեղ թե արտասահմանում, հասկանա, որ այս անիրավ աշխարհում քաղաքականություն ասվածը ոչ բանաստեղծություն է, ոչ փիլիսոփայություն, ոչ էլ բարոյախոսություն:

Այժմ ես պարտք եմ զգում իմ շնորհակալությունը հայտնելու Գարեգին Վեհափառին իր հարյուր հազար դոլլար նվիրաբերումի համար, մանավանդ, որ այս օրերին իր Աթոռը և ժողովուրդը Լիբանանում ծանր կացությանց մատնված են: Սրտանց աղոթում եմ, որ Լիբանանը իր ներքին խաղաղությունը գտնի, և փրկարար համերաշխությունը հնարավոր դառնա մահմեդական և քրիստոնյա համայնքների միջև: Ես մինչև հիմա չեմ հասկանում, թե ինչպես այդ աքանչելի, դրախտավայր երկիրը, որ իրավամբ Միջերկրականի մարգարիտն էր նկատվում, և բոլորը երջանիկ էին, ահա ավելի քան տասներկու տարի է, բոլորն էլ դժբախտ են և ողբերգական վիճակի մեջ: Կմաղթեմ, որ Աստված օգնության հասնի տառապած լիբանանյան բոլոր համայնքներին: Մեր բոլորի սրտից բխած այս աղոթքը ձեզ հետ տարեք:

Նաև սիրով կընդունեմ ձեր հրավերը Անթիլիաս այցելելու, երբ որ հարմար պահը կստեղծվի, որպեսզի կարողանանք այնտեղ կրկին ողջագուրվել և շարունակել մեր սրտակցությունը և գործակցությունը: Ես հոգու պարտք ունեմ Անթիլիաս այցելելու, խոստում էի տվել հազար ինը հարյուր հիսունվեցին վերջին պահին, երբ մեկնում էի և կողքիս էր հետագա Զարեհ Կաթողիկոսը, որ ինձ չափ, գուցե ինձանից ավելի հուզված էր: Ողջագուրվեցինք և խոստացա, որ մենք շուտով կհանդիպենք:

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս, Մեր սերը, Մեր գնահատանքը, Մեր հիացումը ձեզի և բարի ճանապարհ:

Երկու հայրապետները անակնկալ էին նախատեսել սեղանակիցների համար: Ճաշկերույթից հետո Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հյուրերին հրավիրեց ընդունելության սրահ: Այնտեղ հանդիսավոր պայմաններում Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը ստորագրեցին հայ ժողովրդին ուղղված համատեղ կոչ.

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.-Ի ԵՒ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.-Ի

Գոհութիւն Աստուծոյ, որ Մենք՝ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց և Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, վերջնտին ողջագուրուեցինք հայրենի հողի վրայ, Փրկչին մեր Յիսուս Քրիստոսի Իջման Սուրբ Տաճարի կամարների տակ եղբայրական սիրով, մէկս միւսին վշտակից և մխիթարիչ, այս դժուար օրերին, որ ապրում է մեր Եկեղեցին և ժողովուրդը, անցեալ Դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած աւերիչ երկրաշարժի հետևանքով:

Թող Տէրը օգնական մնայ աղէտեալ վշտահար մեր ազգի զաւակներին և զօրացնի նրանց Սուրբ Հոգով ու մշտանորոգ եռանդով, որպէսզի մօտ ապագայում վերաշինուեն մեր քանդուած քաղաքներն ու գիւղերը, հայրենի պետութեան ծրագրած մեծածաւալ շինարարական իրագործումներով ու արտասահմանի հայութեան, քոյր Եկեղեցիների և բարեկամ բազում ժողովուրդների առատաձեռն օժանդակութիւններով:

Յանուն Հայաստանեայց Եկեղեցու բոլորին մեր խորազգաց շնորհակալութիւնն ենք յայտնում:

Ինչպէս այս տարի Փետրուարի սկզբին Նիւ-Եորքում, այժմ Մենք մի անգամ ևս կոչ ենք ուղղում Սիսիւռքի մեր Եկեղեցիներին ու բոլոր հայկական կազմակերպութիւններին, որ շուտափոյթ կերպով իրենց լիազօր ներկայացուցիչներն ուղարկեն Հայաստան և վերաշինութեան պատասխանատու պատկան մարմնի հետ համախորհուրդ, ճշդեն իրենց օգնութեան առարկան և այն ի կատար ածեն առաջիկայ ամիսներին։

Մեր սրտագին իղձն է, որ համազգային այս ծանր մտահոգութեանց օրերին, շարունակի անսասան ու անխառն մնալ այն միասնութեան ոգին՝ մէկ Եկեղեցի, մէկ ազգութիւն, մէկ մայր հայրենիք նշանաբանով, որ առաւել ամրապնդուեց Մեր հանդիպումներով ու գործակցութեամբ Մայր Հայրենիքում, անցեալ Դեկտեմբերի մեծ աղէտից անմիջապէս յետոյ և ապա Նիւ-Եորքում այս տարի Փետրուարին, ամերիկահայոց հանգանակութեան Մեր օրհնութիւնները բաշխելու առթիւ։

Մեր ժողովրդի համար բախտորոշ այս շրջանում Մենք պատասխանատուութեան զգացումով հրամայական ենք նկատում համագործակցութեան ծաւալումը և սերտացումը Մայր Աթոռիս և Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի միջև՝ եկեղեցական, հոգևոր, կրթական, ազգային-մշակութային կեանքի մակարդակների վրայ, յոյժ ցանկալի գտնելով նաև եղբայրական փոխադարձ սիրոյ ու գործակցութեան ոգու ամրապնդումը Սիսիւռքի մեր Եկեղեցու ամբողջ տարածքի վրայ, նաև բարւոք կարգաւորումովը որոշ շրջաններում թեմական հարցերի։

Որով, Մենք մի անգամ ևս հաստատում ենք և աւետում մեր Եկեղեցու հաւատացեալ համայն ժողովրդին ի Հայաստան և ի Սիսիւռ աշխարհի՝ թէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մէկ ու անբաժան ազգային Եկեղեցի է, մէկ ու անբաժան նուիրապետական կառոյցով, խարսխուած Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքի վրայ և պատմականօրէն նուիրագործուած մօտ 1700 տարիներից ի վեր։

Ապրիլեան այս օրերին, երբ գտնւում ենք անմոռաց յիշատակի առաջ 1915-ի հայոց ցեղասպանութեան անմեղ զոհերի, Մեր աղօթքը առաքում ենք առ Աստուած, որ լուսաւոր պահի նրանց հոգիները արդարների աշխարհում և մխիթարի մեր Եկեղեցու և ազգի զաւակներին Սուրբ Հոգով ու նաև զօրացնի նրանց սրտերը, որպէսզի բոլորը՝ անխտիր, քահանայք և ժողովուրդ, հաւատարիմ մնան մեր նահատակների ուխտին և նրանց անժամանցելի կտակին։

Գոհունակութեամբ ողջունում ենք նաև մեր հայրենի պետութեան որոշումը, որով Ապրիլի 24-ի թուականը պաշտօնապէս յայտարարւում է 1915-ի հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր։

Տրուած լինելով, որ յառաջիկայ տարին 75-ամեակն է մեր նահատակների զոհաբերման, առաջադրում ենք մինչև 1990 թուականի Ապրիլ ամիսը հարկ եղած նախապատրաստական աշխատանքները յառաջ տանել, իրականացնելու համար նրանց սրբադասումը, ի շարս տօնելի սրբոց Եկեղեցւոյս Հայաստանեայց։

Մեծ Եղեռնի ոգեկոչումի այս օրերին, մեր նահատակները Մեր վրայ սրբազան պարտք են դնում Մեր հայրական աղերսը և հրաւէրը ուղղել հայրենաբնակ Մեր զաւակներին, որ չտարուեն խաբուսիկ երազանքներով ու չհեռանան Մայր Հայրենիքից։ Հայութիւնը կարող է ապրել ու գոյատևել որպէս ազգութիւն միայն իր մայր երկրի տարածքի վրայ, անբաժան հարազատ հողից, իր լեռներից ու աստղերից, մշտահաղորդ իր արմատներին։

Սփիւռքի հայութիւնը ոյժ և նեցուկ է մեր ժողովրդին այնքան ժամանակ, ինչքան հայատուսնցիք ամուր կառչած են մնում իրենց ազգի մայր հողին ու այնտեղ աճեցնում իրենց համրանքը, զարգացնում իրենց տնտեսութիւնը և ազատօրէն ծաղկեցնում իրենց հայադրոշմ մշակոյթը, միշտ հաւատարիմ իրենց ոգեկանութեան ակունքներին, յաւերժական Արարատի նայուածքի տակ:

Մեր իղձն է նաև, որ Խորհրդային Միութեան մէջ սկիզբ առած վերակառուցման ու ժողովրդավարութեան ողջունելի ընթացքը, պսակուի բարենորոգիչ արդար իրագործումներով, մարդու և ազգութիւնների իրաւունքների ամրապնդման ոգով, որով մեր ազգային հանրապետութիւնը ևս ապրի շինարար զարգացում և խաղաղ ծաղկում Խորհրդային Միութեան ազգութիւնների համերաշխ ընտանիքում:

Այսօր պարտք ենք զգում Մեր խոր ցաւը արտայայտել, վերջին երկու ամիսներին տեսնելով Լիբանանի հայ ժողովրդի կրած ծանր հարուածը, լիբանանցի միւս համայնքների հետ միասին, շարունակուող ռմբակոծութիւնների հետևանքով: Հրաւիրում ենք մեր ժողովրդին աղօթելու Լիբանանի կռիւների դադարման, խաղաղութեան վերստեղծումի և բնականոն պայմանների վերահաստատման համար, միանգամայն զօրավիգ կանգնելու լիբանանահայ մեր հաւատացեալ զաւակների վերականգնման կենսական գործին:

Ապրիլի 26 և 27-ի օրերին Մեր շքախմբերի անդամներով, անհուն գոհունակութեամբ ուխտի գնացինք Սիւնեաց աշխարհի մեր պատմական վանքերը, միատեղ աղօթելով Նորավանքում (ԺԳ. դար), Սիսիանի Ս. Յովհաննէս եկեղեցում (7-րդ դար) և Տաթևի վանքում (Ժ. դար):

Այդ օրերին հոգեկան մխիթարութեան ու հրճուանքի անմոռանալի պահեր ապրեցինք Եղեգնաձոր, Սիսիան և Գորիս քաղաքների հրապարակներում, որտեղ Մեզ ցնծութեամբ դիմաւորեցին մեր ժողովրդի զաւակները տասնեակ հազարներով, տեղի քաղաքային իշխանութեանց ներկայութեամբ:

Թող բարին Աստուած քաղցրութեամբ ընդունի Մեր աղօթքները և պահի պահպանի անսասան ու ծաղկեալ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին, մեր հայրենի պետութիւնը և համայն հայ հաւատաւոր ժողովուրդը ի Հայաստան և ի Սփիւռս աշխարհի, միշտ համազգային միասնութեան, համերաշխ գործակցութեան ու խաղաղութեան մէջ:

«Յաւել ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան». ամէն:

ՎԱՉԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ս. Էջմիածին,
29 ապրիլ 1989 թ.